

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24.06.2011թ.

Ժամը 12.20

Նիստը վարում է Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը:

Հարցերի համար հերթագրվել է Երևանի ավագանու 10 անդամ:

Կարեն Կարապետյան.

-Հարցի համար ձայնը տրվում է Աշոտ Մովսեսյանին, խնդրեմ:

Աշոտ Մովսեսյան.

-Հարցս վերաբերում է Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց և Խաչատրյան փողոցների միացման ծրագրին:

Ուզում եմ տեղեկանալ, թե որ փուլում են գտնվում աշխատանքները:

Կարեն Կարապետյան.

-Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը Ձեր հարցին գրավոր կպատասխանի:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Ջիվան Պողոսյանին:

Ջիվան Պողոսյան.

-Հարգելի՛ քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցս վերաբերում է տրանսպորտի ոլորտին.

«Հաղթանակ» թաղամասը սպասարկում է հ.23 երթուղին, որը ժամը 19.00-ից հետո, կարելի է ասել, չի աշխատում, երևի ավտոմեքենաների քանակն է քիչ, ինչպես նաև թաղամասում բացակայում են ավտոկանգառները: Այսինքն կան մոտ 10 կանգառներ, որտեղ չկան կանգառանշաններ և կանգառասրահներ: Հարցը բազմիցս բարձրացրել եմ և ոչ մի պատասխան չեմ ստացել: Ինչպես նաև կան բողոքներ բնակիչների կողմից հ.33 երթուղու համար. այդ տրանսպորտային միջոցը երեկոյան ժամերին չի աշխատում, նույն վիճակն է նաև Նորք-Մարաշ վարչական շրջանում, որտեղ աշխատում է 3 երթուղային տրանսպորտ: Ավելացնեմ նաև, որ «Երևանտրանս» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող երթուղայիններն ավելի վատ են աշխատում, քան մասնավոր ընկերություններին պատկանող տրանսպորտային միջոցները:

Այս հարցերի հետ կապված ուզում եմ պարզաբանեք՝ ի՞նչն է պատճառը և հնարավո՞ր է կարգավորել նշված տրանսպորտային միջոցների աշխատանքը, որպեսզի մարդիկ տուն հասնեն ոչ թե տաքսիով, այլ երթուղայիններով: Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան.

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը, խնդրե՛մ:

Հենրիկ Նավասարդյան.

- Հարգելի՛ ավագանի.

Տեղեկացնեմ, որ «Երևանտրանս» ՓԲ ընկերությունը երթուղային միջոցներ չունի: Այդ ընկերությունը սպասարկող կազմակերպություն է, որը կազմակերպում է երթուղայինների աշխատանքը:

Երևան քաղաքում հասարակական տրանսպորտը սպասարկելու համար ունենք Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Ավտոբուս» ՓԲ ընկերությունը, որն ունի 5 ավտոբուսային երթուղիներ, Երևան քաղաքում մնացած բոլոր սպասարկող երթուղայինները մասնավոր տնտեսվարողների կողմից սպասարկվող երթուղայիններ են:

Ինչ վերաբերում է հ.23 երթուղուն և «Հաղթանակ» թաղամասի երթուղու սպասարկմանը, նշեմ, որ այդ հատվածում կանգառանշանների տեղադրման հարցը ՀՀ ճանապարհային ոստիկանության խնդիրն է: Կանգառանշանների տեղադրման մասին մինչև այժմ հարց չի բարձրացվել: Անհրաժեշտության դեպքում մենք կդիմենք ՀՀ ճանապարհային ոստիկանությանը: Այնտեղ կա ընդամենը 4-5 փողոց, յուրաքանչյուր փողոցի վերջնամասում երևի մեկ կանգառ են կատարում և՛ հ.23 երթուղին, և՛ հ.56 երթուղին:

Ինչ վերաբերում է նրան, որ ժամը 19.00-ից հետո «Հաղթանակ» թաղամասում տրանսպորտային միջոցները չեն աշխատում, նման դեպք հնարավոր չէ, որովհետև կան տեղեկագրեր, որոնց մեջ նշվում է, թե տրանսպորտային միջոցները մինչև ժամը քանիսն են աշխատում: Հարցը տեղին կլիներ, եթե նշվեր, որ ժամը 21.00-ից հետո երթուղիների քանակը պակասում է կամ երբեմն չեն աշխատում: Մենք խիստ ուշադրություն կդարձնենք դրա վրա և կաշխատենք, որ հ.23 և հ.56 երթուղիներն աշխատեն մինչև ժամը 23.00-ն:

«Խարբերդ» թաղամասի հետ կապված նշեմ, որ հ.33 երթուղու աշխատանքը սկսվում է Դավթաշեն վարչական շրջանից և սպասարկում է մինչև ժամը 23.00-23.30-ն: Հարց է բարձրացվել Խարբերդում երկրորդ երթուղի ավելացնելու համար, որպեսզի սպասարկման մակարդակը բարձրացվի: Նոր երթուղային ցանցի կազմման ժամանակ մենք կանդրադառնանք այդ խնդրին, որպեսզի բնակչության կողմից դժգոհություններ չլինեն:

Նորք-Մարաշ վարչական շրջանում սպասարկումը կատարվում է երեք երթուղիներով. ունենք հ.22 միկրոավտոբուսային երթուղին, որը սպասարկում է մինչև օրվա ուշ ժամերը, իսկ հ.109 երթուղին վատ է սպասարկում, և տեղեկացվել է այդ երթուղին սպասարկող կազմակերպությանը, որպեսզի կարգավորեն երթուղու աշխատանքը, և եթե մեկամսյա ժամկետում երթուղու աշխատանքը չկարգավորվի, ապա երթուղու սպասարկման աշխատանքները կդադարեցվեն և այն կսպասարկվի այլ կազմակերպության կողմից, իսկ հ.45 ավտոբուսը սպասարկում է նորմալ:

Ջիվան Պողոսյան.

-Երթուղին աշխատում է, բայց երեկոյան ժամերին տրանսպորտային միջոցների քանակը պակասում է և վատ են աշխատում, իսկ «Հաղթանակ» թաղամասի կանգառասրահների վերաբերյալ ոչինչ չասվեց:

Հենրիկ Նավասարդյան.

-Այսօրվա դրությամբ Երևան քաղաքի մի շարք փողոցներում ևս չունենք կանգառասրահներ: Ունենք թվով 381 կանգառասրահ, բայց Երևան քաղաքում ունենք մոտ 700 կանգառ և կա ծրագիր կանգառասրահներ տեղադրելու համար նախագծեր ներկայացնելու վերաբերյալ՝ հետագայում Երևան քաղաքի հարակից տարածքների կանգառներում նոր կանգառասրահներ պատրաստելու և կահավորելու նպատակով: Շնորհակալություն:

Ջիվան Պողոսյան.

-Պարո՛ն քաղաքապետ, ևս մեկ հարց ունեմ:

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարցս ուղղում եմ Ձեզ.

Երևան քաղաքում կան բազմաթիվ թաղամասեր, որոնք չունեն կոյուղագծեր:

Երևան քաղաքի բյուջեն սուղ է, բայց դա բնակիչների կենցաղային կարևոր պայմաններից մեկն է, օրինակ «Նոյ» թաղամասը և «Հաղթանակ» թաղամասի մեկ երրորդ մասը չունեն կոյուղագծեր: Մենք նախատեսում ենք կոյուղագծերի կառուցում, հասկանալի է, որ «Երևան Ջուր» ընկերությունը չունի կոյուղագծեր կառուցելու պայմանագրեր, բայց դա բնակչության համար առաջին կենցաղային պայմանն է:

-Առաջարկում եմ, որ յուրաքանչյուր տարվա կտրվածքով որոշ թաղամասերում կատարվեն կոյուղագծերի կառուցման աշխատանքներ: Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան.

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը:

Կամո Արեյան.

-Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ծրագիրը ներառված է «Երևան Ջուր» ընկերության գործունեության 10 տարվա պայմանագրային ծրագրի մեջ: Այստեղ Դուք շեշտադրում արեցիք, որ «Երևան Ջուր» ընկերությունը չունի կոյուղագծերի ընդլայնման որևէ

ներդրումային բաղադրիչ, բայց երկրորդ ֆինանսավորման վարկային ծրագիրը, որը նախատեսվում է ֆրանսիական կառավարության կողմից, /25 մլն եվրո ծրագիրը/ հիմնականում վերաբերում է ջրահեռացմանը: Առավելությունը տրված է Աերացիային, կոլեկտորային համակարգերին և ջրաղբյուրներին:

«Նոյ» և «Մուշ» թաղամասերի կոյուղագծերի վերաբերյալ հարցը ներկայացվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դ. Օհանյանի կողմից, նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են, երկու օրից կներկայացվեն ֆինանսավորման աղբյուրները:

Ինչ վերաբերում է «Հաղթանակ» թաղամասին, նշեմ, որ այն միակ թաղամասը չէ, Երևան քաղաքում կան շատ թաղամասեր, որոնք ապահովված չեն կոյուղատար համակարգով, Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ «Երևան Ջուր» ընկերության հետ համատեղ քննարկումներ կկատարվեն և կպարտավորեցնենք ընկերությանը, որ առավելագույնը կարողանա իր ներդրումային ծրագրերի մեջ ներառել և ամենաանհրաժեշտ վայրերում իրականացնել կոյուղատար համակարգերի կառուցման աշխատանքներ:

Հարցադրումը տեղին է, իրոք, մայրաքաղաքում խնդիրը առկա է:

Ջիվան Պողոսյան.

-Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան.

-Շնորհակալություն, հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Արման Մադաթյանին:

Արման Մադաթյան.

-Էրեբունի վարչական շրջանի մանկական այգում չորս տարի առաջ սկսվել էին եկեղեցու կառուցման աշխատանքները, սակայն որոշ ժամանակ անց շինարարական աշխատանքները դադարեցվեցին:

Հարցս հետևյալն է՝ եկեղեցու կառուցման աշխատանքները երբևէ վերսկսվելո՞ւ են, քանի որ եկեղեցու կառուցման աշխատանքների դադարեցումն առաջացրել է Էրեբունի վարչական շրջանի բնակիչների դժգոհությունը, և տվյալ տարածքը վերածվել է աղբավայրի:

Կարեն Կարապետյան.

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Ա. Հարությունյանը, խնդրե՛մ:

Արմեն Հարությունյան.

-Եկեղեցու կառուցման աշխատանքների դադարեցման հիմնական պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է, իսկ տարածքը պատկանում է եկեղեցուն:

Կարեն Կարապետյան.

-Աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից փաթեթ կպատրաստվի, որպեսզի հասկանանք, թե ինչ ենք անելու:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Պողոս Փլավչյանին:

Պողոս Փլավչյան.

-Հարգելի՛ ավագանի, հարգելի՛ գործընկերներ, ունեմ երեք տարբեր ոլորտների վերաբերող:

Առաջինը վերաբերում է նրան, որ Երևան քաղաքում գոյություն ունեն դեռ պատերազմի ժամանակ բազալտե սալիկներից կառուցված փողոցներ, որոնք հարմար չեն երթևեկության համար, որովհետև պահանջները փոխվում են: Այդպիսիք կան Արաբկիր վարչական շրջանում՝ Համբարձումյան և Վաղարշյան փողոցների մի հատվածում, Նոր Նորքի 4-րդ զանգվածում և Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններում:

Ի՞նչ մոտեցում է ցուցաբերվելու և ինչպե՞ս կարելի է այդ հարցը լուծել, որպեսզի ասֆալտապատվեն նշված տարածքները: Շնորհակալություն:

Կամո Արեյան.

-Շնորհակալություն հարցի համար, մայրաքաղաքում մնացել են այդպիսի փոքր հատվածներ՝ Նոր Նորքի զանգվածում, Թոթովենցի, Հովհաննիսյան փողոցներում, դեպի Թևոսյան տանող ճանապարհին և ժամացույցի գործարանի տարածքին հարակից մի հատվածում, Արաբկիր վարչական շրջանում, նաև մայրաքաղաքի մյուս վարչական շրջաններում:

Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ ավագանի, 2012 թվականի ծրագրերի նախապատրաստման փուլում ենք, նախագծերը նախապատրաստվում են և համաձայն մասնագետների եզրակացության՝ այդ հատվածները պետք է վերակառուցվեն: Այսինքն՝ պետք է ապամոնտաժվի սալահատակ մասը, քանի որ դրա վրա ասֆալտապատում հնարավոր չէ կատարել, և խճային հիմքով ստեղծել ասֆալտապատ տարածքներ:

Պարո՛ն քաղաքապետ, տեղեկացնում եմ, որ 2012 թվականի ծրագրում կներառենք նշված փողոցները:

Պողոս Փլավյան.

-Այսինքն՝ այն կազմակերպության հետ, որի հետ նախկինում պայմանավորվածություն ունեինք, ասում էր՝ թանկ է, մենք վերցնենք և փոխարենն ասֆալտ անենք:

Կամո Արեյան.

-Պարո՛ն Փլավյան, որևէ կազմակերպության հետ պայմանավորվածություն չունենք, կազմվելու է նախագիծ-նախահաշիվ, գնումների ընթացակարգով հայտարարվելու է մրցույթ, մրցութային կարգով ընտրվելու է կապալառու, և իրականացվելու են ասֆալտապատման աշխատանքները:

Պողոս Փլավյան.

-Շնորհակալություն: Երկրորդ հարցը հետևյալն է.

2011 թվականին Երևանի ավագանու «Բյուջեի մասին» որոշմամբ նախատեսվել էր Արաբկիր վարչական շրջանում կառուցել երկու գետնանցում՝ Ազատության պողոտայում՝ Տոլստոյի դպրոցի դիմաց և Օրբելի-Բաղրամյան խաչմերուկում:

Նախկինում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս.Դանիելյանի հետ պայմանավորվածության համաձայն՝ պետք է կառուցվեր ստորգետնյա անցում, հետագայում Երևանի գլխավոր ճարտարապետ Մ. Հասրաթյանը նշում էր, որ կառուցվելու է վերգետնյա անցում, այժմ այդ երկու նախագծերը պատրաստ են:

Պարո՛ն քաղաքապետ, խնդրում եմ այս հարցին հրատապ լուծում տալ և ճշտել՝ որ նախագիծն է իրականացվելու, որովհետև նշված տարածքներում երկու դպրոց կա, ես այս հարցը բազմիցս բարձրացրել եմ:

Կարեն Կարապետյան.

-Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը երկու նախագծերն էլ կուսումնասիրի և կպատասխանի:

Պողոս Փլավյան.

-Երրորդ հարցս վերաբերում է գրադարաններին.

Երևանի ավագանու նախորդ նիստին քննարկել էինք գրադարանների հետ կապված որոշ հարցեր: Կոնկրետ Շենգավիթ վարչական շրջանում դրանից հետո մեր գործընկերների հետ որոշ գրադարաններ շրջայցեր ենք կատարել, աշխատել ենք քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական և մշակույթի վարչությունների հետ:

Ունենք խնդիր. գրադարաններն իսկապես գտնվում են վատթար վիճակում, որոշ գրադարաններում պարզապես ահագանգող վիճակ էր, օրինակ՝ կոյուղին կամ ջրի խողովակներն անցնում են գրքերի կամ պահոցների վրայով, կամ ընթերցասրահ չունեն, որովհետև վատ վիճակ է:

Ես կուզենայի Ձեր ուշադրությունը հրավիրել այս ամենին, և ավագանու հաջորդ նիստերին նախապատրաստենք ծրագիր, որով կբարելավվի այս հիմնարկների վիճակը: Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան.

-Գրադարանների բարեկարգման հետ կապված հաստատված ծրագիր չունենք:

Պարոն Ներսիսյան, պետք է մտածենք և ինչ-որ կերպ բիզնեսի ոլորտ ներգրավենք, խնդրենք ամեն մեկը կողորդինացնի մի գրադարան՝ որպես բարեգործություն:

Պարոն Արեյան, Դուք էլ փորձեք լուծումներ գտնել:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Արտավազդ Սարգսյանին:

Արտավազդ Սարգսյան.

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, ունեմ երկու հարց.

Առաջին հարցը վերաբերում է մայրաքաղաքում կառուցվող բազմաբնակարան շենքերին, որոնք վերջին 10 տարիների ընթացքում Երևան քաղաքում մեծ թափով սկսեցին կառուցվել և եթե չլինեք համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, նույն տեմպերով կշարունակվեին:

Բազմաթիվ կառուցապատողներ, լինելով ոչ պրոֆեսիոնալ, ժառանգելով մոտ 600 քմ հողատարածք, որոշակի միջոցներ են ձեռք բերում և ստանալով կառուցապատման թույլտվություն՝ սկսում են կառուցել բազմաբնակարան շենքեր: Կառուցելով առաջին-երկրորդ հարկերը՝ այդ գույքը գրավադրում են ՀՀ բանկերում և ստանում վարկային միջոցներ՝ հետագայում շենքը կառուցապատելու համար: Այդ տարածքները որպես բնակարան կարողանում են պայմանագրերով վաճառել քաղաքացիներին: Այսօր կան կոնկրետ փաստեր՝ 16-րդ թաղամասում, Մամիկոնյանց փողոցում, **Բուլվար** թաղամասում, որ արդեն 2-3 տարի է կառուցապատվող շենքերը դատական կարգով անցել են ՀՀ բանկերին և այն բնակիչները, ովքեր արդեն մասնակի կամ լրիվ վճարել էին բնակարանների արժեքը, այս պահին ոչինչ չունեն:

Հարց կծագի, թե ի՞նչ կապ ունի քաղաքապետարանն այս խնդրի հետ:

Կառուցապատման թույլտվություն տալիս է Երևանի քաղաքապետարանը, և որևիցե չափանիշ չկա՝, թե ում պետք է կառուցապատման թույլտվությունը տրվի:

Զարգացած երկրներում կա փորձ, ամենատարածվածը այն է, որ կառուցապատման թույլտվություն ստանալու համար կառուցապատողը պարտավոր է որոշակի գումար վճարել բանկին, մինչև շենքն ավարտական ակտ ստանա:

Երկրորդ օրինակը՝ Սկանդինավյան երկրներում՝ որպես առաջադեմ անշարժ գույքի շուկա, մեծ է հասարակության հսկողությունն այս ոլորտի վրա, և կառուցապատման թույլտվությունը նույնիսկ հասարակական կազմակերպությունները և շինարարական միություններն են տալիս:

Խնդրում եմ պատասխանել հարցին:

Կարեն Կարապետյան.

-Բավական է ներկայիս առևտրային և ֆինանսական պակաս ակտիվության պարագայում կառուցապատողին պարտադրվի երաշխիքի գումար վճարել, կառուցապատող չի լինի:

Քաղաքապետարանն այս խնդրում ուղիղ գործառույթ չունի: Հիմա փորձում ենք կառուցապատողների հետ համատեղ տվյալների ընդհանուր բազա ստեղծել, և՛ բնակարանային, և՛ ժամանակացույցի, և՛ կարգապահության, և՛ բարեկարգման պարտավորությունների հետ կապված խնդիրների վերահսկողություն իրականացնել: Բայց բիզնեսում այդ ռիսկը կա, և վատ է, որ բնակիչները տուժում են: Համապատասխան իրավաբանական և այլ տեսակի աջակցություն պետք է ցուցաբերել: Բայց նաև բնակիչը պետք է հասկանա, որ պայմանագիր կնքելու դեպքում այդ ռիսկը կա, և եթե քարոզչություն անենք, որպեսզի բնակիչը հասկանա, թե որ կառուցապատողից է գնում բնակարանը, նման կառուցապատողները, որոնք ապագա չունեն, կվերանան:

Ինչ վերաբերում է, թե ինչ իրավաբանական աջակցություն և ինչ պայմաններ պետք է ստեղծենք, մեր գործընկերները կուսումնասիրեն, բայց գումար վճարելը՝ որպես երաշխիք, կնպաստի շինարարական ակտիվության նվազեցմանը: Մեր գործընկերներն այդ հարցի շուրջ կմտածեն:

Արտավազդ Մարգարյան.

-Շնորհակալություն: Առաջարկում եմ կառուցապատողներին ռեյտինգավորել, որը կլինի թափանցիկ, որպեսզի գնորդ-քաղաքացին տեղեկացված լինի, թե որ կառուցապատողն ավելի բարձր ռեյտինգ ունի, և որ կառուցապատողն ավելի նոր է, ռիսկը կարող է ավելի բարձր լինել:

Կարեն Կարապետյան.

-Դրա մեջ կան կոռուպցիոն ռիսկեր, ադմինիստրատիվ միջամտություն, և առաջարկը լիբերալ չէ: Այլ խնդիր է, որ շինարարական կազմակերպությունները գնահատեն կառուցապատվող շենքերի որակը:

Արտավազդ Մարգարյան.

-Երկրորդ հարցն առաջարկ է, այն վերաբերում է Երևան քաղաքի մասին հեռուստահաղորդումներին, որոնք յուրաքանչյուր շաբաթ եթեր են հեռարձակվում «Արմնյուզ» հեռուստաալիքով, որը ողջունելի է, և բավականին լավ ձևով ներկայացվում են այն

աշխատանքները, որոնք իրականացվում են Երևանի քաղաքապետարանի կողմից: Սակայն պետք է նշել, որ այդ հաղորդումներում ոչ մի անդրադարձ չկա Երևանի ավագանու գործունեությանը:

Երևան քաղաքը դեռ վերջերս է որպես համայնք ձևավորվել և խնդիր ունի կայանալու: Առաջարկում եմ այդ հեռուստահաղորդումներում լուսաբանվի նաև Երևանի ավագանու գործունեությունը: **Շնորհակալություն:**

Կարեն Կարապետյան.

-Շնորհակալություն, առաջարկն ընդունելի է, տիկի՛ն Սարգսյան, նշե՛ք Ձեզ մոտ:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Գագիկ Սանթրոսյանին, խնդրե՛մ:

Գագիկ Սանթրոսյան.

-Հարգելի՛ քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, կներկայացնեմ երկու հարց.

Առաջին հարցը վերաբերում է արտաքին լուսավորությանը, մասնավորապես Քանաքեռ-Ջեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու 2-րդ նրբանցքից դեպի 10-րդ փողոց տանող ճանապարհի արտաքին լուսավորությանը, որն ընդհատվում է 8-րդ փողոցում, քանի որ 8-րդ փողոցից մինչև խաչմերուկ ընկած հատվածը լուսավորված է:

2009 թվականին կատարվում էին արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ, սակայն աշխատանքները դադարեցվեցին, հավանաբար՝ կապված բյուջեի հետ: Մինևույն ժամանակ, Նոր Նորքի 4-րդ զանգվածի Հովհաննիսյան փողոցում ևս կա արտաքին լուսավորության խնդիր:

Թբիլիսյան խճուղու 2-րդ նրբանցքի հետ կապված՝ նշել, որ երեկոյան ժամերին թափառող շները վնասում են քաղաքացիներին, և բնակչության կողմից եղել են բողոքներ, որպեսզի այդ փողոցները և Երևանի «Շամպայն-գինիների գործարան» ԲԲԸ հարևանությամբ գտնվող բարձրահարկ շենքերի տարածքում՝ դեպի Քանաքեռ տանող հատվածը լուսավորվի:

Մինչև այսօր նշված տարածքներում արտաքին լուսավորության հարցը չի կարգավորվել, խնդրում եմ այս հարցին ուշադրություն դարձնել:

Կարեն Կարապետյան.

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը:

Կամո Արեյան.

-Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեն բավարարեց ընդամենը 12 փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար, որոնք նշված փողոցների նման երկրորդային նշանակություն ունեցող փողոցներ էին:

Ձեր կողմից նշված փողոցները կներառվեն 2012 թվականի ծրագրում, առավելագույն նախապատվությունը կտրվի Երևանի «Շամպայն-գինիների գործարան» ԲԲԸ հարևանությամբ գտնվող բարձրահարկ շենքերից դեպի սեփական սեկտոր ընկած աջակողմյան ճանապարհին:

Գագիկ Սանթրոսյան.

-Հնարավորության դեպքում լավ կլիներ նշված փողոցներն ընդգրկվեն 2011 թվականի ծրագրում:

Կամո Արեյան.

-Եթե մինչև երրորդ եռամսյակի ավարտն ունենանք մեր ձեռնարկության կողմից տնտեսած միջոցների հաշվին գումար, կիրականացնենք, բայց սպառո՛չ չեմ կարող խոստանալ, որովհետև այն կախված է նախագծանախահաշվային արժեքից:

Պարո՛ն քաղաքապետ, խոստանում եմ, որ նշված տարածքներում վաղվանից ուսումնասիրություններ կկատարվեն:

Կարեն Կարապետյան.

-Շնորհակալություն:

Գագիկ Սանթրոսյան.

-Պարոն Արեյան, այդ նույն հարցի հետ կապված՝ Շովրոյան փողոցի հ.հ.66-82 տների տարածքներում ևս արտաքին լուսավորության խնդիր կա:

Կամո Արեյան

-Նշված բոլոր հասցեներում ուսումնասիրություններ կկատարվեն:

Գագիկ Սանթրոսյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի փողոցից դեպի Բուսաբանական այգի տանող ճանապարհին:

Տարիներ առաջ այդ փողոցը հատող երկաթգծի հատվածում գտնվող փողոցը փակվեց: Քանի որ այսօր երկաթգծի ծանրաբեռնվածությունը մեծ չէ, խնդրում եմ ուշադրություն դարձնել փողոցի բացմանը, որի շնորհիվ մեծ տնտեսում տեղի կունենա:

Կարեն Կարապետյան.

-Ճիշտ է, նշված հատվածում կատարվել են ուսումնասիրություններ, և այժմ քննարկում ենք շնորհակալություն:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Հրաչ Պողոսյանին:

Հրաչ Պողոսյան.

-Պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Երևան քաղաքում տեղադրված անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակներին.

Երևան քաղաքում գոյություն ունեցող հուշատախտակները, որոնք տեղադրված են պատվավոր մարդկանց հիշատակը հավերժացնելու նպատակով, գտնվում են վատ վիճակում: Դրանց վրա փակցվում են թերթիկներ, լուսանկարներ, հայտարարություններ, հարկավոր է դրանք մաքրել: Հիմնականում դա վերաբերում է Կենտրոն վարչական շրջանին, նույնը վերաբերում է հուշարձաններին, օրինակ՝ Գայի արձանին հարակից տարածքում տեղադրված են ստրակցիոններ, անհրաժեշտ է դրանք տեղադրել որոշակի հեռավորության վրա:

Երկրորդ հարցս վերաբերում է մայրաքաղաքի փողոցների մայթերին և գետնանցումներին.

Մայրաքաղաքի և մայթերը, և գետնանցումները հարմարեցված չեն հաշմանդամների համար: Նրանք մեր քաղաքի օրինական բնակիչներն են և իրավունք ունեն օգտվելու մայթերից և գետնանցումներից: Ես կարծում եմ, որ այս հարցին պետք է ուշադրություն դարձնել:

Կարեն Կարապետյան.

-Ունենք ծրագիր ստորգետնյա անցումների հետ կապված, և երբ ունենանք գործընկերներ, այդ խնդրանքը կձևակերպենք:

Մայրաքաղաքի մայթերի հետ կապված նշեմ, որ այս տարի 300 մլն դրամ տրամադրելու ենք այդ աշխատանքներին: Տրանսպորտային միջոցներ ընդունելու ժամանակ ևս քննարկել ենք դա, որպեսզի համապատասխան սայլակներով բնակիչներին այդ հնարավորությունը տանք:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Աստղիկ Գևորգյանին:

Աստղիկ Գևորգյան.

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Օր օրի և ժամ առ ժամ փոխվում է Երևանի արտաքին տեսքը, Երևանը գեղեցկանում է, բոլորս արձանագրում ենք և մեր գոհունակությունն ենք հայտնում, բայց այդ համատեքստում չեն դիտվում Քրք Քրքբոյանի ներդրումների «շնորհիվ» կառուցված այն մայթերը, որոնք հայտնվել են անընդունելի վիճակում: Նկատի ունեմ Աբովյան փողոցի սայլակները, Մաշտոցի պողոտայի՝ Ֆիլիարմոնիային հարակից տարածքը: Աշունը շուտով մեր դուռն է թակելու, նորից հավաքվելու են անձրևաջրերը, ձմռանն առաջանում են լուրջ խնդիրներ, ինչպես նաև քաղաքացիների համար վտանգավոր է, քանի որ սայլակները տեղաշարժված են:

Հարցս հետևյալն է. ունե՞նք ֆինանսական միջոցներ, որպեսզի մինչև աշուն այդ մայթերը բարեկարգվեն:

Կարեն Կարապետյան.

-Ունենք 300 մլն դրամ, կազմակերպել ենք քննարկում և Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեւյանը հարց է բարձրացրել լրացուցիչ ֆինանսական միջոցների տրամադրման դեպքում նաև ներառել այդ խնդիրները:

Աստղիկ Գևորգյան.

-Անդրադառնամ երկրորդ հարցին.

Հարցս վերաբերում է մանկապարտեզներին:

Մայրաքաղաքում մանկապարտեզները դարձան անվճար, որի պատճառով հերթեր են գոյացել:

Կա՞րողոք հնարավորություն նվազեցնելու այդ հերթերը:

Մյուս հարցս վերաբերում է նրան, որ մայրաքաղաքում ժամը 17.00-ին մանկապարտեզների աշխատանքն ավարտվում է, արողոք հնարավոր է ստեղծել երկարօրյա մանկապարտեզներ, որպեսզի այն ծնողները, ովքեր աշխատում են ժամը 17.00-ից հետո, կարողանան երեխաներին մանկապարտեզում թողնել մինչև ժամը 19.00-ն:

Կարեն Կարապետյան.

-Ինչ վերաբերում է մանկապարտեզների ընդլայնմանը, որպեսզի հերթեր չգոյանան, տեղեկացնեմ, որ մենք քննարկում ենք այդպիսի ծրագիր, դա կախված է ֆինանսական միջոցներից:

Ինչ վերաբերում է մայրաքաղաքում երկարօրյա մանկապարտեզների ստեղծմանը, հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Գ. Սողոմոնյանը:

Գայանե Սողոմոնյան.

-Շնորհակալություն հարցի համար: Բարձրացված հարցը մտահոգել է նաև Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանին:

Քաղաքապետի հանձնարարությամբ աշխատակազմի հանրակրթության վարչությունը և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան բաժինների մասնագետները մոնիտորինգ են անցկացրել ծնողների շրջանում և 8 վարչական շրջանների կողմից առաջարկ է ներկայացվել, որպեսզի, ժամը 17.00-19.00 ընկած ժամանակահատվածում աշխատող ծնողների խնդրանքը հաշվի առնելով, մայրաքաղաքում ստեղծենք երկարօրյա մանկապարտեզներ: Մենք նախապատրաստել ենք հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Երևանի ավագանու որոշման նախագիծ: Այն կներկայացվի Ձեր քննարկմանը:

Երևան քաղաքի 8 վարչական շրջաններում թվով 39 մանկապարտեզներ կաշխատեն մինչև ժամը 17.00-19.00-ն ընկած ժամանակահատվածում, կձևավորվեն 35 երեխայից կազմված խմբեր, և կընդառաջենք այն ծնողներին, ովքեր այս հարցը բարձրացրել են:

Տեղեկացնեմ, որ մինչև այդ մայրաքաղաքի մանկապարտեզներում միատեսակ աշխատանքային գրաֆիկ չէր գործում, տարբեր վարչական շրջաններում մանկապարտեզների աշխատանքը տարբեր ժամերի էր ավարտվում, այժմ Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ մայրաքաղաքի բոլոր մանկապարտեզներում հաստատված է միատեսակ աշխատանքային գրաֆիկ՝ ժամը 08.00-17.30, իսկ թվով 39 երկարօրյա մանկապարտեզներում, որոշման հաստատումից հետո, աշխատանքային ժամերը կլինեն ժամը 17.30-19.00:

Աստղիկ Գևորգյան.

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, եթե թույլ կտաք, անդրադառնամ պարոն Հ. Պողոսյանի բարձրացրած հարցին:

Խոսքս վերաբերում է Երևան քաղաքի շենքերի պատերին ինքնուրույն փակցված հայտարարություններին:

Խորհրդային շրջանում Մերձբայթյան հանրապետություններում առանց քաղաքի գլխավոր նկարչի որևէ մեկն իրավասու չէր քաղաքում փակցնելու հայտարարություն:

Կրկին նշեմ, որ Չեքիջյանի երգչախումբը մնացել էր առանց գովազդի, քանի որ երեկոյան գովազդը փակցրել էին, առավոտյան այն հանվել էր պատերից, որովհետև չկար քաղաքի գլխավոր նկարչի թույլտվությունը:

Արողոք կարելի՞ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի Երևան քաղաքում կասեցվի առանց թույլտվության հայտարարությունների փակցումը՝ հաշվի առնելով, որ նախապատրաստվում ենք ընտրություններին:

Տեղեկացնեմ նաև, որ նախորդ նիստին բարձրացված հարցը՝ Կոմիտասի ծաղրանկարի վերաբերյալ, դեռ փակցված է:

Կարեն Կարապետյան.

-Ինչպիսի՞ լուծում կա Ձեր բարձրացրած հարցին:

Առաջին տարբերակը՝ ունենալ համապատասխան ֆինանսական միջոցներ և անձնակազմ, որպեսզի կատարվեն մաքրման աշխատանքներ, որը ծախսատար է, շատ դեպքերում դրա

հիմնավորումը կլինի բավականին դժվար, որովհետև այդ գումարն այլ ոլորտում ներդնելով ավելի կարևոր հարց կլուծվի, երկրորդ տարբերակը՝ պետք է քաղաքացիների գիտակցությունը առավելագույնս բարձրացնենք, որպեսզի չփակցնեն այդպիսի հայտարարություններ, ինչպես նաև համատիրությունները վերահսկեն շենքերը, քանի որ դրանք համատիրությունների սեփականությունն են:

Մենք կատարել ենք ուսումնասիրություններ, և կան տարբեր մեթոդներ: Անհրաժեշտ է կատարել քարոզչություն, ինչպես նաև համատիրությունները պետք է առավելագույն կերպով ներգրավվեն այդ գործընթացին:

Պողոս Փլավյան.

-Պարո՛ն քաղաքապետ, հասարակական կարգի պահպանության ծառայությունը կարող է այդ լիազորություններն իրականացնել:

Կարեն Կարապետյան.

-Պարո՛ն Փլավյան, անձնակազմը չի բավականացնում: Այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական միջոցներ, բայց կարելի է այդ աշխատանքներում ներգրավել համատիրություններին:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Արմեն Ամիրջանին:

Արմեն Ամիրջան.

-Պարո՛ն Կարապետյան, հարցս վերաբերում է եկեղեցաշինությանը:

Երևան քաղաքում աղանդավորներն եկեղեցի են կառուցում, իսկ մայրաքաղաքում կան վարչական շրջաններ, որտեղ մինչև այսօր եկեղեցիներ չկան: Արդյունքները ցույց են տալիս՝ որտեղ չկան եկեղեցիներ, այդ վայրերում աղանդավորներն ավելի շատ են: Օրինակ՝ Աջափնյակ վարչական շրջանում տարածք է հատկացվել եկեղեցու կառուցման համար և որոշակի աշխատանքներ կատարված են՝ ի պատիվ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի, կաթողիկոսն օծել է, բայց մի քանի տարի է՝ արդեն եկեղեցին կիսակառույց է: Եկեղեցին պետք է համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնի, սակայն եկեղեցին այդքան գումար չունի, առաջարկում եմ՝ Երևանի քաղաքապետարանն աշխատանքների իրականացումը վերահսկի, բարերար գտնենք կամ դիմենք ՀՀ Կառավարությանը և այս հարցին լուծում տանք:

Կարեն Կարապետյան.

-Դուք էլ աշխատեք, բարերար գտեք կամ որևէ այլ աղբյուր, եթե դեմ չեք:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Սերգեյ Մկրտչյանին:

Սերգեյ Մկրտչյան.

-Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցս վերաբերում է Նորք-Մարաշ վարչական շրջանի խմելու և ոռոգման ջրերին:

Տեղեկացնում եմ, որ Նորք-Մարաշ վարչական շրջանում խմելու ջրի տևողությունը կազմում է օրական 2-3 ժամ:

Պարո՛ն քաղաքապետ, խնդրում եմ Ձեր միջամտությունը Նորք-Մարաշ վարչական շրջանում խմելու ջրի տևողությունն ավելացնելու համար:

Երկրորդ հարցս վերաբերում է ոռոգման ջրին:

Տեղեկացնեմ, որ 2008 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ պետք է կառուցվեր ոռոգման ջրագիծ, որը Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանները պետք է ապահովեր ոռոգման ջրով, սակայն երևի ֆինանսական ճգնաժամի պատճառով այդ գործընթացը չարունակվեց:

Հնարավոր է արդյոք այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ գումարները նախատեսենք Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում: Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան.

-Այժմ «Երևան Ջուր» ընկերության հետ սերտ աշխատում ենք, որպեսզի այդ ընկերության մատուցած ծառայությունները կարգավորենք, որովհետև շատ անելիքներ կան: Կոնկրետ Նորք-Մարաշ վարչական շրջանի հետ կապված՝ խնդրում եմ աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությանը, «Երևան Ջուր» ընկերության հետ համատեղ, կատարել ուսումնասիրություններ և ճշտումներ: Իսկ ոռոգման ջրի խնդիրը Երևան քաղաքում բավականին սուղ է: Այս պահին

պատրաստ ենք սիզամարզերով ապահովել բավականին մեծ տարածքներ, բայց եթե ոռոգման ջրի խնդիր ունենք, դա կլինի անխմաստ աշխատանք:

2012 թվականի ծրագիրը ներկայացնելիս դուք կարող եք նախաձեռնությամբ հանդես գալ, ինչպես նաև իմանալու եք՝ ինչ խնդիրների լուծման համար ենք նախատեսում բյուջեն և եթե համարեք, որ կա ուղղություն, որը պակաս կարևոր է, քան դա և որը ներառված չէ, կառաջարկեք այն ներառենք:

Մերգեյ Մկրտչյան.

-Նշեմ, որ այդ ոռոգման ցանցից կարող է որոշ չափով օգտվել Նոր Նորք վարչական շրջանը:

Կարեն Կարապետյան.

-Շնորհակալություն, կուսումնասիրենք:

Այլ հարցեր կան: Եթե չկան, այդ դեպքում բոլորին շնորհակալություն եմ հայտնում, ցանկանում եմ լավ տրամադրություն:

Ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ